



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

«Պատմական հուշարձանների և կուլտուրական մյուս արժեքների պահպանության նկատմամբ հոգածառությունը Հայկական ՍՍՀ բաղադրիչների պարտքին ու պարտականությունն է»:

(ՀՍԽՀ սահմանադրույթուն, հոդված 66)

Արարատյան դաշտավայրի արևմտյան մասում, Երևանից շուրջ շուրջ 50 կմ հեռու, Արագածոտն հին զավառում, ժամանակակից Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր, Հայկավան, Զրացն գյուղերի տարածքում բարձրանում է մի ժայռոտ կարմրավոն բլուր: Բլրի վրա էր տեղադրված Արմավիր քաղաքի միջնաբերդը, իսկ բլրից հետին արևմուտք տարածվում էին քաղաքային թաղամասերը: Հին ժամանակներում բլրի հարավային ստորոտով և քաղաքի հարավային եզրով հոսող Արաքսը նպաստում էր Արմավիրի պաշտպանությանը ու շուրջ մատակարարում նրան:

Հնության լուսապատճեն մշտագես ուղեկցել է Հայաստանի հին մայրաքաղաք Արմավիրին:

Ըստ ավանդության այստեղ բնակություն էր հաստատել Հայկ Նահապետի թոռը՝ Արամայիսը, այստեղ էին ապրել նրա հաջորդները՝ Ամասիան, Հարման, Արամը, Անուշավանը, Սոսանվերը: Վերշինս ծոված էր Արմավիրի սոսիների պուրակին, ուր գուշակություններ էին արվում: Մրանք հաւ ժողովրդի հնագույն

Արմավիրի բլուրը



առասպեկտներն են, պատմահոր՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» միջնորդությամբ մեզ հասած:


Բայց Վրմավիր եկան ճանապարհորդներ և հնագետներ, պատմաբաններ, ճարտարապետներ, լեզվաբաններ և ստեղծվեց Արմավիրի իսկական պատմությունը: Դեռևս անցյալ զարում Արմավիրի բլուրների ստորոտներում և շրջակա գյուղերում գտնվեցին ուրարտական սեպագիր արձանագրություններ՝ Արգիշտի 1-ի, Սարդուր 11-ի և Ռուսա 111-ի, որոնք այժմ պահպան են Հայաստանի պատմության պետական թանգարանում: Այդ արձանագրություններից իմանում ենք, որ այստեղ մ.թ.ա. 776 թ.՝ էրեբունիի հիմնադրումից 6 տարի անց, Արգիշտի 1 թագավորը կառուցում է նոր քաղաք Արգիշտիինիլին, որի արևելյան միջնաբերդը հիմնադրվել է Արմավիրի բլուրի վրա, իսկ մյուսը՝ արևմտյանը սուրբ Դավթի բլուրի վրա:

Արմավիրի բլուրի վրա հնագետները բացել են ուրարտական պարիսպը: Այն կառուցված է հոմանազուսից, քարե՝ բազալտի և հրաբխաքարի հիմքի վրա: Պարբռսպի հիմքի քարերը տեղադրված են կոպիտ



Ուրարտական սենյակ (VIII—VII դդ. մ.թ.ա.)

Մերձականաց հետ համալիր






Կավե արձանիկ (II—I դդ. մ. թ. ա.)

Ժայռաքանչուր պաշտամունքային նշաններ

են մշակված, մյուս տեղերում՝ բարձր որակով: Երբ պարհապատ հանդիպում էր ժայռի, ժայռը փորվում էր աստիճանաձև և աստիճանների վրա դրվում էին պարսպի շարքերը: Ժայռափոր առուները ժառայել են ջրահեռացմանը ամրոցից:

Ամրոցի արևմտյան մասում հնում տեղադրված է եղել երկու մեծ շենք, մեկը հինգ, մյուսը երեք սենյականոց, որոնց քարե հիմքերն են պահպանվել միայն: Երկու շենքերն իրարից բաժանում է միայն նրբանցքը, որի անձրևաշրերը հեռացվում են տուֆի սալերից կառուցված առվի օգնությամբ: Ուրարտական սովորության համաձայն այն տեղ-տեղ անցնում էր հատուկ փորված ժայռի միջով ու դուրս գալիս պարսպից դուրս:

Բլրի գագաթին կանգնած է եղել ուրարտական տաճարը, որը վերափոխված օգտագործվել է նաև հայկական-հելլենիստական ժամանակաշրջանում և վերակառուցվել միշնադարում: Պահպանել է նրա նախնական հարթակը, որի վրա բարձրանում էր տաճարային շենքը: Ուրարտական ճարտարապետությանն ու շինարարական տեխնիկային խիստ բնորոշ են: Գերազանց մշակված վեմքարերը: Տաճարին կից արևմուտքից բացվել են



Արմավիրի հունարեն արձանագրություններ



մերձտաճարային համալիրի աղյուսաշեն, բավականին լվավ պահպանված սենյակներն ու դահլիճները, երկար միշանցքը, իրար հետ կազմված բազմաթիվ դռներով: Բլրի արևմտյան մասը գրավում են երկարավուն դահլիճ-պահեստները, որտեղ սովորաբար պահպան էին ցորենի պաշարները: Ամրոցի հյուսիս-արևմտյան մասում գտնվում է ամրոցի մուտքը, իսկ դրան կից մոտ 8 իրար նման և միենալու շափի սենյակները՝ ամրոցի պահակախմբի կաց սրանները: Մ. թ. ա. VI դարին Արգիշտիփինիլին ընկալ թշնա-

միների հարգածների տակ: Ավերածության ու հրդեհի հետքերը լավ նկատվում են ամենուրեք: Քաղաքը անկում է ապրում, ավերվում է ջրամատակարարման համակարգը, բայց կյանքը աստիճանաբար աշխատանում է նրա արեւելյան մասում՝ ձեւվորվող Արմավիր քաղաքում:

Երբ Ալեքսանդր Մակեդոնացու հարվածների տակ ընկնում է Արեմենյան տերությունը, իշխանավոր երգանզրի իրեն Հայաստանի թագավոր է հողակում և երկրի մայրաքաղաքը հաստատում Արմավիրում: Ուրարտական պարփակը



Տաճարային շենք (միջին դարերում վերակառուցված)



Ջրահողացման առողի



Միջնադարյան հնագույն նոր



Գունազարդ կրատերիսկոս (III-II դդ. թ. թ. ա. պ.)



Հելլենիստական դարաշրջանի վեմեր մետղյա կապերի համար փոխարինությունների մասնակիությունը

շենքերը կանգուն էին և պիտանի օգտագործման երվանդունիների պալատական համալիրն են դառնում արևելյան լանջի բազմասենյակ երկու շենքերը՝ Ուրարտական տաճարը վերափոխվում է հայ արքաների Արեք և Լուսնի տաճարի՝ Մուտքը պակելի արդյունավետ կերպով պաշտպանելու համար, ամրոցի հյուսիս-արևմբռյան անկյունում, լանջն ի վայր, կառուցվում է կիսաբուրու մի աշտարակ, որի քարերը իրար միացվել ան ծիծեռնակապոշի ձև ունեցող երկաթե կապիտով։ Ամրոցի արձամտյան մասում իրար գուգանչու երկու պարիսպների միջև ընկած տարածքում տեղափորվում են ամրոցի պիելի համեստ կարպի բնակիչների, սպասավորների կացարանները։ Բլրի հարավային ստորոտում երվանդ թագավորը երկու ժայռաբեկորների վրա դրոշմել է տալիս հունարեն արձանագրություններ, որոնք պատմում են մ. թ. ա. III դ. վերջին բաղաքական անցքերի, Արեք պաշտա-

մունքի, հունական աշխարհից կատարված մի շարք նորամուծությունների մասին։

Արաբն իր հունը փոխելով, հեռանում է քաղաքից, և Երվանդ վերջինը մայրաքաղաքը տեղափոխում է փոքր-ինչ դեպի արևմուտք՝ Արաբսի ու Ախուրյանի միախառնման տեղում կառուցված նոր քաղաք՝ Երվանդաշատ, բայց կյանքը Արմավիրում շարունակվում է։ Պեղսամների ժամանակ գտնվել են գունազարդ խնցեղների գեղեցիկ նմուշներ, մետաղ աշխատանքային գործիքներ և զենքեր, քարն սպասքի օրինակներ, կավե արձանիկներ և այլն։

Արմավիրի քաղաքային թաղամասերը տարածվում էին գեպի արևմուտք մինչև նոր Արմավիրի ժայռաբլուրները։ Այստեղ հիմնադրվում է հելլենիստական դարաշրջանի ազգարակ, որի բնակելի մենայակները չեղուցվում էին բուխարիներով, իսկ տնտեսական բաժանմունքում գործում



Բնկե կրծքազարդ (V—IV դգ. մ. թ. լու.)

էին խաղող ճզմելու հարմարանքներ, անգամ հնձաններ: Մ. թ. առաջին դարերում կյանքը քաղաքում աստիճանաբար մարում է: Արշակ թագավորի օրոք (մ.թ. IV դ.) Արմավիրը լքված ամրոց էր:

Կյանքը Արմավիրում վերականգնվում է Բագրատոնիների իշխանության տարիներին և շարունակվում Զաքարյանների ժամանակ: Արմավիրի բլրի վրա ծնունդ է առնում մի փոքր միջնադարյան բնակավայր իր կացարաններով, թոնիրներով և տնտեսական հորերով:

XIII դարի սկզբում մոնղոլները ավերեցին, ոչնչացրին այդ բնակավայրը:

Տիրացյան Գևորգ Արտաշեսի
Հին ԱՐՄԱՎԻՐ

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության բնկերություն

Մասն. խմբագիր՝ Բ. Ն. Առաքելյան
Խմբագիր՝ Ս. Վ. Ստեփանյան
Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Ասրյան
Վերստուգող սրբագրի՝ Գ. Հ. Ղազարյան

Հանձնված է շարվածքի 21.07.1986 թ.
Ստորագրված է տպագրության
14.07.1987 թ.: Ֆորմատ՝ $84 \times 108^1/32$
Թուղթ՝ «Կավճապատ», տպագր. 0,42
պայմ. մամ. հրատ.՝ 0,4 մամ.: Պատվեր
780: Տպաքանակ 10000: Գինը 15 կոպ.
ՀՍՍՀ հրատարակչությունների, Կոլիգրա-
ֆիայի և գրքի առևտուրի գործերի պետա-
կան կոմիտեի № 2 տպարանի մասնաճյուղ,
Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. № 26: